«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր
Պ. Ս. Ավետիսյան
«10» փետրվարի 2020 թ.

## ԿԱՐԾԻՔ

**Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:**

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2020 թվականի փետրվարի 10-ի նիստում (արձանագրություն թիվ 02-20):

Մասնակցում էին՝
**Սանդոյան Էդվարդ Մարտինի՝** տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝** տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, էկոնամիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, **Կարապետյան Էդգար Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Հայրապետյան Վիկտորիյա Լեոնիդի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Սահակյան Դավիթ Ալբերտի՝** ֆ.-մ. գիտ. թեկնածու, դոցենտ, **Թամազյան Արմեն Լիպարիտի՝** ավագ դասախոս, **Իսկանդարյան Դավիթ Սամվելի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս,**Պետրոսյան Արմեն Շահենի՝** ավագ դասախոս, **Մելքոնյան Արմինե Պապինի՝** դասախոս, **Զախոյան Էլիզա Միքայելի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, **Ավետիսյան Անի Գրիգորի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի,** տնտեսագիտ.

թեկնածու, դոցենտ, **Հակոբյան Էսթեր Աշոտի՝** ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի՝** ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Լուսինե Կառլենի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի՝** դասախոս, **Նաշիկյան Լիլիա Աշոտի՝** ասպիրանտ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լինելով ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ ՀՀ-ում երկար տարիներ փորձ է արվել ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համապարփակ կամ պիլոտային ծրագրեր: ՀՀ-ում գյուղատնտեսությունը բոլոր առումներով զբաղեցնում է առաջնային դիրք: Ե՛վ պարենային անվտանգության, և սոցիալ-տնտեսական նշամակությամբ, և՛ զբաղվածության մակարդակով, և՛ ՀՆԱ-ում դրա տեսակարար կշռի և ազդեցության չափի առումով գյուղատնտեսությունը առաջնային ուշադրության կարիք ունի: Այստեղ են աճում Հայաստանի համար ազգային և մշակութային արժեք ներկայացնող մշակաբույսեր՝ ծիրան, խաղող, նուռ, և այլն: Ցորենի ցանքատարածությունները հանդիսանում են պատերազմի մեջ գտնվող երկրների համար սովի դեմ դիմակայության երաշխիք: Հետևաբար, այս ոլորտի պաշտպանության, ֆինանսական կայունության և զարգացվածության բարձր մակարդակի ապահովումը պետական կարևորագույն գերխնդիրներից մեկն է:

Հետազոտական առումով Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները, ներդրման առանձնահատկությունները, ազդեցությունը ապահովագրական և ֆինանսական շուկայի վրա ուսումնասիրվել են ոչ բավարար չափով և որակով: Դա է վկայում այն փաստը, որ 2019 թվականի սեպտեմբերին, այսինքն՝ ՀՀ Անկախությունից ուղիղ 28 տարի անց, նոր ՀՀ-ում հնարավոր է լինում ներդնել գյուղատնտեսական ապահովագրություն: Մինչ այս գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման համար իրականացվել են հաշված հետազոտություններ: Մասնավորապես, 2014թ.-ին ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը

գյուղական համայնքներում» ՄԱԶԾ-ՃԿՎԲ Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար»՝ Կլեմանս Տատեն-Ժալերանի կողմից: 2017թ.-ին ՀՊՏՀ Ամբերդ Մատենաշարը ներկայացրել է «Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» հաշվետվությունը, որով առաջարկվել է որոշ հայեցակարգային դրույթներ: Մշակվել են տարբեր հայեցակարգեր, սակայն մինչև 2017 թվականը հնարավոր չի եղել իրականացնել այդ ծրագրերը: Կատարված հետազոտությունները չեն արտացոլել գյուղատնտեսական ապահովագրության ներդրման իրական և պրակտիկ ճանապարհային քարտեզ, ռիսկերի փաթեթ, սակագնային քաղաքականություն, խարդախությունների դեմ պայքարի մեխանիզմներ և այլն:

2017 թվականից սկսած KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերով շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը մշակել է ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր: Մշակմանը մասնակցել են ներկայացուցիչներ և փորձագետներ ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից, ՀՀ Կենտրոնական բանկից, ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններից և այլն: Անցկացվել են մի շարք հարցազրույցներ գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ, հետազոտվել են ՀՀ-ում առկա վիճակագրական տվյալներ, կլիմայական պայմաններ, որի արդյունքում նախագծվել է պատրաստի ծրագիր: Ապահովագրության լավագույն մեխանիզմ է ընտրվել «արտադրական ծախսերի» հիման վրա ապահովագրությունը:

Հիմք ընդունելով ՀՀ-ում գյուղատնտեսության կարևորությունը, դրա սոցիալական նշանակությունը, պարենային անվտանգության հիմնախնդիրները՝ ՀՀ-ում գյուղատնտեսական ճիշտ և համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումը և դրա կատարելագործումը ունի ռազմավարական նշանակություն, և օր առաջ անհրաժեշտություն կա իրականացնել այդպիսի ապահովագրությունը:

Իհարկե, այսօր արդեն իսկ կատարվող աշխատանքը ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար կարելի է համարել «բավարար»՝ գյուղացուն ինչ-

որ մակարդակի պաշտպանվածություն և ծածկույթ տրամադրելու առումով, սակայն, այնուամենայնիվ, անհրաժեշտություն է առաջանում պատշաճ խորությամբ կատարել հետազոտություն՝ ուսումնասիրելով, թե արդյոք այսօր առաջարկվող մոդելը բավարարում է գյուղացու և ապահովագրական ընկերությունների պահանջները, գտնել մոդելի թերությունները և բացերը, և առաջարկել ավելի կատարելագործված մեխանիզմ:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լևոն Քոչարյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է բացահայտել ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական պիլոտային ծրագրի թերությունները և խնդիրները, գտնել համապատասխան կատարելագործման և բարելավման ուղիներ և մեթոդներ՝ առաջարկելով ավելի ճկուն մոդել, քան «արտադրական ծախսերի» հիման վրա իրականացվող մոդելն է: Նշված նպատակին հասնելու համար ձևավորվել են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար արդեն իսկ կատարված աշխատանքները, վերլուծությունները և կիրառելիությունը,
2. Բացահայտել մինչ այժմ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բացակայության դրդապատճառները,
3. Բացահայտել ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի կիրառելիությունը, դրական և բացասական կողմերը, հիմնախնդիրները, գտնել այսօրվա ծրագրերից դուրս մնացած գյուղացիական տնտեսությունները, դրանց կարևորությունը, ինչպես նաև այդ տնտեսությունների համար մշակել համապարփակ ապահովագրության պրոդուկտներ,

4. Տեսականորեն հիմնավորել գյուղատնտեսության ապահովագրության առավել արդյունավետ մոդելի անհրաժեշտությունը՝ հիմնված հատուցման ամբողջականության վրա,
5. Գտնել գյուղատնտեսության ապահովագրության բաշխման, հաշվառման և այլ կազմակերպական գործընթացների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության գիտական նորույթը և հիմնական արդյունքները, որոնք պայմանավորված են աշխատանքում ներկայացված հիմնախնդիրների դիտարկմամբ, կայանում են հետևյալում.

1. Գնահատելով «Արտադրական ծախսերի» գյուղատնտեսության ապահովագրության մոդելը՝ առաջարկվել է ՀՀ-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրության՝ «**Բերքի ապահովագրության**» վրա հիմնված մոդելը փուլային եղանակով, ի լրումն «Արտադրական ծախսերի» մոդելի,
2. Առաջարկվում է ներդնել Ջերմոցային տնտեսությունների ապահովագրության մեխանիզմ՝ գույքի ապահովագրության շրջանակներում «Բիզնեսի Ընդհատում» ռիսկի ապահովագրության ծածկույթներով,
3. Առաջարկվում է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հետ զուգահեռ ՀՀ-ում ստեղծել և խթանել գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ Բաժնետիրական Ընկերության իրավական կարգավիճակով և կոոպերատիվի մասնակիցների բաժնեմասերի առկայությամբ,
4. Առաջարկվում է Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներկայիս «Արտադրական ծախսերի» հիման վրա գործող մոդելի արդյունավետության բարձրացման նպատակով կատարել կոնկրետ գործավարման և այլ ծախսերի (սակագնի բեռնվածության) օպտիմալացում, ինչպես ապահովագրության մեջ, այնպես էլ վերաապահովագրության փոխանցվող հատվածի տեսակարար կշռի մեջ,
5. Առաջարկվում է ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության բաշխումը իրականացնել նոր ուղղություններով, այդ թվում՝ օգտագործել Անօդաչու թռչող սարքերի հնարավորությունները ռիսկերի և վնասների գնահատման համար:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները հնարավորություն կտան ներդնել գյուղատնտեսական ապահովագրության ավելի կատարելագործված մոդել, կրճատել գործող մոդելի ծախսերը և բարձրացնել դրա արդյունավետությունը, օգտագործել այնպիսի ժամանակակից գործիքներ, ինչպիսիք են Անօդաչու թռչող սարքերը վնասների գնահատման մեջ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից, ներածությունից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից՝ ընդամենը 150 էջ ծավալով:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության ներածական մասում ներկայացվել են աշխատանքի նպատակն ու դրանից բխող խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Ձևակերպվել են ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը, ներկայացվել է աշխատանքի գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Գյուղատնտեսության ապահովագրության համակարգը եվ դերը»** գլխում քննարկվում են ՀՀ-ում գյուղատնտեսության կառուցվածքը և դերը, ռիսկերը, ինչպես նաև ապահովագրության կիրառելիությունը: Ուսումնասիրվում են գյուղատնտեսության ապահովագրության միջազգային լավագույն փորձերը և մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության մոդելը և դրա ազդեցությունը ապահովագրական շուկայի վրա»** գլխում ուսումնասիրվել են ՀՀ-ում ներդրված գյուղատնտեսության ապահովագրության համակարգը, դրա իրականացման կարգը, գնագոյացումը, պայմանները և այլն: Բացահայտվել են մի շարք խնդիրներ և բացթողումներ, որոնց լուծման համար առաջարկվել են կատարելագործման ուղիներ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բաշխման (վաճառքների) եղանակների գնահատումը»** գլխում ներկայացվում են գյուղատնտեսության ապահովագրության բաշխման լավագույն եղանակները ՀՀ-ում: Մասնավորապես, քննարկվում են կոոպերատիվների դերը և ստեղծման մոտեցումները ու կիրառելիությունը, ջերմոցային տնտեսությունների ապահովագրությունը, նորագույն տեխնոլոգիաների կիրառելիությունը, ինչպես նաև ՀՀ-ում գործող խոշոր ձեռնարկությունների բաշխման ցանցերի օգտագործելիությունը:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում շարադրվել են հետազոտության ուսումնասիրություններից և գնահատականներից բխող հիմնական եզրահանգումները և առաջարկությունները: Հատկապես ընդգծվում է, որ գյուղատնտեսության ապահովագրության ներկայիս մոդելը հնարավոր է բազմաթիվ ուղղություններով կատարելագործել՝ փոխելով ինչպես բուն մոդելը, այնպես էլ գործող մոդելի ծախսային բաղադրիչները, բաշխման եղանակները, ապահովագրության շրջանակները, և այլն:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ատենախոսությունում ներկայացված գիտական նորույթ պարունակող հետազոտության արդյունքները վերաձևակերպման կարիք ունեն:

2. Քանի որ Գյուղատնտեսության ապահովագրության մաս են կազմում նաև տնային կենդանիների ապահովագրությունը, ցանկալի կլիներ աշխատանքի մեջ անդրադարձ կատարվեր նաև խոշոր եղջերուների ապահովագրության թեմային:
3. Գիտական նորույթներից 3-րդը ունի վերաձևակերպման խնդիր: Քանի որ կոոպերատիվը ինքնին արդեն կազմակերպաիրավական ձև է, ապա ԲԸ տեսքով կոոպերատիվ ստեղծելը օրենսդրական առումով հնարավոր չէ:
4. Գիտական նորույթ 4-ում քննարկվել և ներկայացվել են ներկայիս մոդելի ծախսային հոդվածների օպտիմալացման եղանակները, սակայն ցանկալի կլիներ անդրադարձ կատարվեր նաև ԳԱԱԳ-ը ներկայիս Ավտոապահովագրողների Բյուրոյի կազմում ներառելու հարցը՝ որպես ծախսերի օպտիմալացման հնարավոր եղանակ:
5. Ի լրումն առաջարկված «Բերքի ապահովագրության» մոդելի ներդրման, ցանկալի կլիներ գնահատել նաև տվյալ մոդելի ներդրման արդյունքում պոտենցիալ ապահովագրական վճարների մուտքերը և հնարավոր վնասաբերության մակարդակը:
6. Ցանկալի կլիներ ներկայացնել «Բերքի ապահովագրության» ներդրման դեպքում հնարավոր վնասաբերության մակարդակը, ապահովագրավճարների ծավալները և ընդհանուր ազդեցությունը ֆինանսական շուկայի վրա:
7. Ցանկալի կլիներ կանխատեսումները անել ավելի երկար ժամկետով, քան 5 տարին է, քանի որ որպես կանոն գյուղատնտեսության ապահովագրության ներդրումը զարգացող երկրներում տևում են 10-20 տարի:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

**Լևոն Անդրանիկի Քոչարյանի «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում»** թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ Լևոն Անդրանիկի Քոչարյանի **«Գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

**Նիստի նախագահ՝**
**Հայ-Ռուսական համալսարանի**
**Տնտեսագիտության և բիզնեսի Ինստիտուտի**
**տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր՝** **Է.Մ. Սանդոյան**

**Հայ-Ռուսական համալսարանի Էկոնոմիկայի և**
**ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ՝** **Մ.Հ. Ոսկանյան**

**Հայ-Ռուսական համալսարանի**
**տնտեսագիտության տեսության և անցումային**
**շրջանի տնտեսության հիմնախնդիրների**
**ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ., դոցենտ՝** **Է.Մ. Զախոյան**

**Հայ-Ռուսական համալսարանի Էկոնոմիկայի և**
**ֆինանսների ամբիոնի ավագ դասախոս՝** **Ա.Շ. Պետրոսյան**

**Հայ-Ռուսական համալսարանի**
**տնտեսագիտության տեսության և անցումային**
**շրջանի տնտեսության հիմնախնդիրների**
**ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու** **Ա. Գ. Ավետիսյան**

**Հայ-Ռուսական համալսարանի գիտական**
**քարտուղարի ժ/պ՝** **Լ.Ռ. Ավետիսյան**